ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. մայիսի 7-10-ը Արաբական Միացյալ Էմիրություններ՝ Աբու Դաբի քաղաք կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Վահան Քերոբյան, ՀՀ էկոնոմիկայի նախարար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Արաբական Միացյալ Էմիրություններ, ք. Աբու Դաբի, 2023թ. մայիսի 7-10-ը

3. Հրավիրող կողմը՝

ԱՄԷ Արդյունաբերության և բարձր տեխնոլոգիաների նախարարություն

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն «Ամենամյա ներդումային համաժողով - 2023» (այսուհետ՝AIM -2023) միջոցառմանը

5. Քննարկված թեմաները՝

- օտարերկրյա ներդրումների խթանում և ներգրավում
- ներդրումային քաղաքականության մշակում
- բազմաշահառուների փոխգործակցություն և փոխազդեցություն
- ներդրումային միտումներ ու ռազմավարություններ, որոնք կարող են օգտագործվել բիզնեսի, երկրի և տարածաշրջանի ներուժն առավելագույնի հասցնելու համար:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

«Ամենամյա ներդումային համաժողով - 2023»՝ առաջատար ներդրումային համաժողովի հիմնական նպատակն էր խթանել նորարարությունն ու տնտեսական աճն ամբողջ աշխարհում, փոխանակել գաղափարներ և հաստատել նոր գործընկերություն:

Միջոցառմանը մասնակցեցին ԱՄԷ և մի շարք օտարերկրյա պետությունների պետական կառույցների ներկայացուցիչներ և բազմաթիվ հեղինակավոր ներդրողներ, ձեռներեցներ: Մասնակիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու տարբեր ոլորտներում ներդրումների վերջին միտումների և հնարավորությունների հետ, ինչպես նաև երկրների զարգացման ճանապարհին բախվող հիմնարար առդի մարտահրավերներին:
Համաժողովի շրջանակներում «Էնթերփրայզ Արմենիա»-ի կողմից կազմակերպվեց Հայաստանի ներդրումային դաշտին նվիրված միջոցառում: Վերջինիս բացման խոսքով հանդես եկան Արաբական Միացյալ Էմիրություններում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Կարեն Գրիգորյանը և ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը: Հանդիպմանը ներկա էին ներդրողներ, գործարարներ, ներդրումների խրախուսման և միջազգային կառույցների ներկայացուցիչներ աշխարհի տարբեր երկրներից: Շնորհանդեսի միջոցով հանդիպման մասնակիցները ծանոթացան Հայաստանի ներդրումային դաշտին ու գործարար հնարավորություններին, օտարերկրյա ներդրողներին տրամադրվող պետական խթանների և արտոնությունների համակարգին, տնտեսության առանձին ճյուղերում ներդրումներ կատարելու առավելություններին: Շնորհանդեսի առանցքային նպատակն էր օտարերկրյա գործարար համայնքի շրջանում բարձրացնել Հայաստանի՝ որպես գրավիչ ներդրումային ուղղության մասին իրազեկվածությունը, հաստատել նոր կապեր օտարերկրյա ներդրողների և գործընկեր կառույցների հետ:
ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը՝ Աբու Դաբիում կազմակերպված համաժողովի շրջանակներում մասնակցեց մի շարք միջոցառումների և հանդիպումների ու ներկայացրեց Հայաստանի ներդրումային հնարավորություններն ու տնտեսական միջավայրը, ինչպես նաև նպատակային ներդրողների հետ քննարկեց հնարավոր

փոխգործակցության ձևաչափը: ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանն՝ ի թիվս այլ հանդիպումների, հանդիպեց նաև ԱՄԷ արտաքին առևտրի պետական նախարար Ն.Գ. Թանի բին Ահմեդ Ալ Զեյուդին, որի ընթացքում կողմերը քննարկեցին երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների հետագա զարգացման հնարավորությունները:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Քերոբյանը՝ հայկական տաղավարում շրջեց Լիբանանի էկոնոմիկայի նախարար Ամին Սալամի հետ. հյուրին ծանոթացրեց տաղավարում ներկայացված մասնավոր նախագծերի հետ, միաժամանակ կողմերը քննարկեցին Հայաստանի և Լիբանանի միջև առևտրատնտեսական հարաբերությունները զարգացնելու հնարավորությունները:

Հայաստանի տաղավարում հյուրընկալվեց նաև Հորդանանի Հաշիմյան Թագավորության ներդրումների նախարար Ն.Գ. տիկին Խուլուդ Ալ-Սաքքիֆը: Հանդիպման ընթացքում կողմերը ընդգծեցին երկկողմ ներդրումային հարաբերությունների ակտիվացմանն ուղղությամբ իրականացվող համատեղ քայլերի շարունակականությունը:

ԱՄԷ այցի ընթացքում Նախարար Քերոբյանը նաև մասնակցեց տնտեսական աճի ապահովման նպատակով խոշոր ներդրումների ներգրավման վերաբերյալ պանելային քննարկմանը, որի ընթացքում կարևորվեց Հայաստանի համար աննախադեպ տնտեսական աճի ցուցանիշները: Մասնակիցներին ներկայացվեց Հայաստանի ներդրումային միջավայրը՝ ՀՀ կառավարության կողմից որդեգրած քաղաքականությունն օտարերկրյա ներդրումներ ներգրավելու նպատակով:

Ներդրումների ներգրավման և միջազգային համագործակցության խթանման նպատակով հանդիպումներ են անցկացվել նաև Ներդրումների խթանման գործակալությունների համաշխարհային ասոցիացիայի, ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի, “Global Data” ընկերության, Էմիրությունների ներդրումային գործակալության և Քուվեյթի ուղղակի ներդրումների խթանման գործակալության պաշտոնյաների և ոլորտային պատասխանատուների հետ:

ԱՄԷ մայրաքաղաք Աբու Դաբիում անցկացված «Ամենամյա ներդրումային համաժողովի» շրջանակներում «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամն արժանացել է մրցանակի՝

ճանաչվելով տարածաշրջանի (Կենտրոնական Ասիա, Կովկաս և ՌԴ) լավագույն ներդրումային ծրագրերով գործակալություն:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համաժողովի վերջին օրը՝ մայիսի 10-ին, ԱՄԷ Հանդուրժողականության և համակեցության նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև կնքվել է հանդուրժողականության ոլորտում փորձի փոխանակման մասին փոխըմբռնման հուշագիր:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

15.05.2023թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՀՀ վարչապետի N 479-Ա որոշում առ 04.05.2023թ
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝
Վահան Քերոբյան- ՀՀ էկոնոմիկայի նախարար

_____

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի)
5. Գործուղման ժամկետները՝ 2023 թվականի մայիսի 7-10-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

_____

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Վահան Քերոբյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս,բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	296,000	**296,000**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD)-60%		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD)	145	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	56,021	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	**224,083**	**224,083**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (դրամ)		**520,083**	**520,083**

1$=386.35

Գլխավոր քարտուղար

/Գլխավոր ֆինանսիստ/՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ֆինանսական և հաշվապահական

հաշվառման վարչության պետ՝ _____ Գայանե Աթոյան

Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների

բաժնի ավագ հաշվապահ՝ _____ Էլեն Հովսեփյան